ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/15100

30.11.2015թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի նոյեմբերի 27-ին այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ:

Այցելության ընթացքում արձանագրվեց, որ Երևանի ՁՊՎ-ի խցերում փակցված չէ Դիտորդական խմբի կողմից տրամադրված պաստառները, ինչպես նաև խցերից հանվել են Դիտորդական խմբի կողմից տրամադրված բոլոր գրքույկները:

Միաժամանակ հարկ ենք համարում տեղեկացնել, որ քաղաքացուն հասանելի տեղ, Դիտորդական խմբի կողմից տրամադրված պաստառը նույնպես փակցված չէր:

Դիտորդական խումբը կարծում է, որ նշված բոլոր գործողությունները (պաստառների չփակցնելը և գրքույկների հեռացումը) միտումնավոր է կատարված, որովհետև մինչ տվյալ այցելությունը գրքույկները եղել են խցերում, իսկ պաստառների մասով ունեն համապատասխան հանձնարարական:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՄՏՈՑ № 5744
02 12 2015

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒՆ
ՄՏՈՑ ՀԱՄ 8267
02 12 2015թ.

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60, Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-4158 <<08>> 12 2015թ.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Ի պատասխան Ձեր 30.11.2015թ. թիվ 2621/15100 հաշվետվության հայտնվում է, որ դրանում նշված հանգամանքները տեղում ուսումնասիրելու նպատակով ՀՀ ոստիկանության շտաբի ծառայողների կողմից ստուգայց է կատարվել ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ, որի արդյունքով տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

Դիտորդների խմբի կողմից տրամադրված գրքույկներն ու թեժ գծի պաստառները հեռացված են եղել ոչ թե բոլոր խցերից և միտումնավոր, այլ դրանք հանվել են միայն ՁՊՎ-ի առաջին հարկում գտնվող թվով հինգ խցերից, որոնք չեն օգտագործվում վերանորոգման կարիք ունենալու պատճառով: Սակայն դիտորդների խմբի այցելության օրն աննախադեպ մեծ թվով ձերբակալվածներ ընդունելու պատճառով վերջիններս պահվել են նաև նշված խցերում:

ՁՊՎ-ի երկրորդ հարկում գտնվող բոլոր խցերում առկա են եղել խմբի կողմից տրամադրված գրքույկները և խմբի թեժ գծի պաստառները: Միայն թիվ 19-րդ խցում է բացակայել խմբի թեժ գծի պաստառը:

Հարկ է նշել, որ ներկայումս բոլոր խցերում փակցված են թեժ գծի պաստառները, իսկ միջանցքում փակցված պաստառը տեղափոխվել է ՁՊՎ-ի վարչական շենքի մուտքի դռան մոտ՝ քաղաքացիներին տեսանելի տեղում:

ՀՀ ոստիկանության շտաբ